ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Բառազուգորդումը[1] *կամ բառակապակցությունը նյութական իմաստ ունեցող երկու և ավելի բառերի կապակցությունն է, որոնք միմյանց հետ միավորվում են իմաստով և քերականորեն՝ որպես առարկաների և դրանց հարաբերությունների ընդհանուր անվանում: Բառակապակցությունները հիմնականում լինում են երկու տեսակ՝ շարահյուսական և դարձվածային: Ըստ կազմության դրանք կարող են լինել երկանդամ կամ պարզ և բազմանդամ կամ ընդարձակ: Ժամանակակից հայերենում ավելի բարձր հաճախականություն ունեն երկանդամ, այսինքն՝ լրացում-լրացյալ բառազուգորդումները, որոնց կազմում լրացյալը կոչվում է գերադաս անդամ, իսկ լրացումը՝ ստորադաս անդամ: Ըստ լրացյալի խոսքիմասային պատկանելության՝ բառազուգորդումները կարող են լինել անվանական, բայական, մակբայական: Օրինակ՝* ընդունակ ուսանող, անսահման գեղեցիկ, ծաղիկ նվիրել, ամենից արագ, մոտավորապես հարյուր *և այլն:*

Ըստ բառազուգորդման բաղադրիչ անդամների միմյանց հետ ունեցած կապի՝ բառազուգորդումները բաժանվում են ազատ կամ սովորական և կայուն կամ տրոհելի տեսակների:

Կազմելով «Ժամանակակից հայերենի բառազուգորդումների բառարանը»[2]*՝ նկատել ենք, որ ավելի մեծ տոկոս են կազմում գոյականական և բայական բառազուգորդումները, որոնց շարքում էլ ավելի հաճախակի են հանդիպում ազատ բառակապակցությունները:*

Կայուն բառազուգորդումները սովորաբար կազմվում են մարմնի առանձին մասերի անուններով, ինչպես՝ աչք, գլուխ, ծունկ, ձեռք, ոտք *և նման այլ բառերով, որոնք, սկիզբ առնելով ժողովրդախոսակցական լեզվում, հետագայում գեղարվեստական գրականության միջոցով թափանցել են գրական լեզու: Օրինակներ՝* աչք ածել՝ անել, աչքից գցել՝ ընկնել, աչքով անել՝ տալ, գլուխ բերել՝ գալ, գլխի գցել՝ ընկնել՝ ճարը տեսնել, ծունկ իջնել՝ խոնարհել, ծնկի բերել՝ գալ, ձեռք բերել՝ մեկնել՝ տալ՝ քաշել, ձեռքերը լվանալ, ձեռքից բաց թողնել, ոտք մեկնել մեկի հետ, ոտքը կյանքից այն կողմ դնել, ոտքի ելնել, ոտքերը գետնից կտր(վ)ել *և այլն:*

---

[1] *Այստեղ և ստորև* բառազուգորդում *բառը գործածում ենք որպես* բառակապակցությանը *համարժեք տերմին (հմմտ. Է. դ. Ա ղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 176):*

[2] *Գ. Թ ո ս ո ւ ն յ ա ն, Ա. Ս ա հ ա կ յ ա ն, Լ. Ս ա հ ի ն յ ա ն. Ժամանակակից հայերենի բառազուգորդումների բառարան, Երևան, 2005 (անտիպ):*

Խոսելու ընթացքում բառերը հարաբերվում են միմյանց հետ, որոշ բառեր ենթարկվում են փոփոխությունների, կազմում նախադասություններ, և տեղի է ունենում հաղորդակցումը: Միմյանց հետ բառերը կարող են կապակցվել համադասական և ստորադասական հարաբերությամբ: Համադասական հարաբերությունը նախադասության բազմակի անդամների գործածությունն է, իսկ ստորադասական կապակցության ժամանակ հանդես են գալիս լրացում-լրացյալ հարաբերություններ, օրինակ՝ կարկաչահոս՝ զուլալ՝ հստակ՝ վճիտ՝ մաքուր՝ պարզ՝ ականակիտ… սարի՝ ձորի՝ անտառի… աղբյուր: *Նման կապակցությունները կարող են արտահայտել նաև փոխաբերական իմաստ, օրինակ՝* ապրուստի՝ եկամուտի՝ հարստության՝ ստեղծագործության՝ կասկածի՝ հույսի՝ հիացմունքի՝ կյանքի՝ ոգևորության՝ սիրո՝ փառքի …աղբյուր:

Բառերը, իրար հետ կապակցվելով, կարող են առաջացնել ազատ, կայուն և դարձվածային կապակցություններ, որոնք սովորաբար ունենում են անվանողական արժեք և որով էլ տարբերվում են նախադասություններից. նախադասությունը հաղորդակցական նվազագույն միավոր է, որն ունի ստորոգում և արտահայտում է ամփոփ միտք, իսկ բառազուգորդումը զուրկ է ստորոգումից, հետևաբար չի կարող ամփոփ միտք արտահայտել[3]*:*

Հայտնի է, որ նախադասության անդամները միմյանց հետ կապակցվում են համաձայնությամբ, առդրությամբ և խնդրառությամբ[4]*: Կապակցության այս եղանակներից բառազուգորդման մեջ գործառում են երկուսը՝ առդրությունը և խնդրառությունը: Գոյականական, ածականական, թվականական և մակբայական բառազուգորդումներին հատուկ է առդրությունը, իսկ բայական (մասամբ նաև ածականական) բառազուգորդումներին՝ խնդրառությունը:*

Շատ հաճախ բառազուգորդումը կարող է կազմվել կապական կապակցությամբ, օրինակ՝ «Ահռելի բանակն Անի էր բերել ոչ թե ճակատամարտի, այլ Գագիկ արքային ահաբեկելու համար*» (Վ. Գրիգորյան, էջ 160):*

Բառազուգորդումները սովորաբար լինում են երկանդամ, բայց հանդիպում են նաև բազմանդամ բառակապակցություններ, օրինակ՝ «Կարելի էր ճանաչել առհասարակ անհանգիստ, ստեղծագործող մարդուն*» (Վ. Խեչումյան, էջ 6):*

Գոյականական և ածականական բառազուգորդումների ստորադաս բաղադրիչը միշտ դրվում է գերադասից առաջ, իսկ բայական բառազուգորդումներինը՝ հետո, օրինակ՝ գրականության՝ պատմության՝ արվեստի՝ մշակույթի՝ հիվանդության՝ հարստության՝ երաժշտության … ակունքներ(ը): *Կամ՝* բերքով՝ անտառներով՝ ջրերով՝ հանածոներով … հարուստ երկիր: Սիրել դժբախտ հայրենիքը՝ բարձր արվեստը՝ մայրենի լեզուն՝ հայրենի տունը, հեռանալ հարազատ հայրենիքից, մոռանալ բուն ճշմարտությունը *և այլն:*

---

[3] *Տե՛ս Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան, 1975, էջ 3:*

[4] *Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան. Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Երևան, 1976, էջ 10:*

Այսպիսով, բառազուգորդումները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով՝ ա) ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, բ) ըստ բաղադրիչների կապակցելիության սերտության աստիճանի, գ) ըստ բառազուգորդման բաղադրիչների քանակի[5]*:*

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ բառազուգորդումները լինում են գոյականական, ածականական, բայական, մակբայական, շատ հազվադեպ նաև թվականական և դերանվանական: Ստորև կանդրադառնանք բառազուգորդումների այդ տեսակներին՝ դրանք ենթարկելով կառուցվածքային, իմաստային և ոճական քննության:

Գոյականական բառազուգորդումներ: *Նման բառազուգորդման գերադաս անդամը լինում է գոյական, իսկ ստորադաս անդամը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերին պատկանող բառերով: Բառազուգորդման այդ տեսակին հատուկ է նաև այն հատկանիշը, որ բառազուգորդման ստորադաս անդամը գերազանցապես նախադաս է լինում, որը կարող է արտահայտվել տարբեր հոլովներով և կապական կապակցությամբ:*

Գոյականական բառազուգորդումները լինում են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, երբեմն էլ բազմաբաղադրիչ, օրինակ՝ ազգի կործանում, պատասխան հայոց հարցին, երկար մորուքով բարեկազմ մարդ *և այլն:*

Գոյականական բառազուգորդումների գոյականական ստորադաս բաղադրիչը կարող է դրվել բոլոր հոլովներով և արտահայտել տարբեր հարաբերություններ, օրինակ՝ Վարդան զորավար, Գրիգոր Նարեկացի, հայ մայրիկ, դռնփակ նիստ, ծառի փչակ, փառքի պսակ, նվեր գիտնականին, երկրից երկիր թափառումներ, վերադարձ արտասահմանից, հիասթափություն ղեկավարներից, մսով փլավ *և այլն:*

Գոյականական բառազուգորդումների ստորադաս բաղադրիչը կարող է արտահայտվել նաև ածականով, թվականով, մակբայով, դերբայով և ցույց տալ զանազան հարաբերություններ, օրինակ՝ անկեղծ վերաբերմունք, հինգ եկեղեցի, ուժգին հարված, խմելու ջուր *և այլն:*

Գոյականական բառազուգորդումներում գերադաս և ստորադաս բաղադրիչները կարող են ունենալ տարբեր հարաբերություններ, այսպես՝ որոշիչ-որոշյալ հարաբերություն. դրանք արտահայտում են գերադաս անդամի հատկանիշը՝ ազգակցություն, մասնագիտություն, զբաղմունք և այլն, օրինակ՝ ժամկետանց դեղեր, դասախոս Կիրակոսյան, վարպետ Մկրտիչ, հորաքույր Մարիամ *և այլն:*

Ուղղական հոլովով ստորադաս անդամ ունեցող բառազուգորդումները կարող են ունենալ անվանողական արժեք և դառնալ վերնագրեր, օրինակ՝ Պապ թագավոր, Մխիթար Սպարապետ, բժիշկ Այբոլիտ, Տիգրան Մեծ *և այլն:*

Հատկացուցիչ-հատկացյալ հարաբերություն. օրինակ՝ Հայաստանի՝ Ռուսաստանի՝ աշխարհի՝ ԱՄՆ-ի …բնակչություն(ը), արևի լույս՝ շող՝ ջերմություն՝ ճառագայթ *և այլն:*

---

[5] *Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 15:*

Մեռական հոլովով դրված ստորադաս անդամը կարող է արտահայտել տեղի, ժամանակի, վերաբերության, պատկանելության և այլ հարաբերություններ, օրինակ ՝ անտառի բերք, գյուղի ճանապարհ, ձմեռվա ցուրտ քամի, օրվա թարմ նորություններ, խաղաղության պայմանագիր, խաղաղության աղավնի, աշխատողի հաշվառման թերթիկ *և այլն:*

Գոյականական բառազուգորդման տրական հոլովով դրված անդամն արտահայտում է տարբեր հարաբերություններ՝ հանգում, մատուցում, վերաբերություն, ժամանակ, տեղ և այլն: Օրինակ ՝ անտեղյակ լուրին՝ դավին՝ վշտին՝ ցավին՝ նեղությանը՝ ուրախությանը՝ տխրությանը՝ նորությանը՝ ճշմարտությանը, նվեր ուսուցչին՝ դասախոսին՝ ընկերոջը՝ ընկերուհուն՝ ծնողին՝ բարեկամին, պատասխան դիմումին՝ հարցմանը՝ հետաքննության արդյունքներին, հանդիպում տանը՝ ճանապարհին, մեկնում երեկոյան ժամը յոթին *և այլն:*

Հայցական հոլովով արտահայտված ստորադաս անդամը ցույց է տալիս տեղային հարաբերություն, ինչպես ՝ մեկնում Մոսկվա, վերադարձ Երևան, ընդունելություն բուհ՝ ակադեմիա *և այլն:*

Բացառական հոլովով արտահայտված բառազուգորդումների գերադաս անդամը կարող է արտահայտել մասնականության և բաղկացության հարաբերություն, օրինակ ՝ պարիսպներից ամենաբարձրը, ղեկավարներից ամենաազնիվը, երկաթից դուռ, կավից սափոր, արծաթից գինդ, ոսկուց մատանի, պղնձից աման *և այլն:*

Երբ գերադաս անդամը լինում է բայանուն, բառազուգորդումը կարող է արտահայտել անջատման, պատճառի, տեղի, ժամանակի, վերաբերության հարաբերություններ, օրինակ ՝ բաժանում հարազատներից, փախուստ բանակից, տառապանք նեղություններից, տանջանք հիվանդություններից, ելք ստեղծված իրավիճակից, չարչարանք մանկությունից, ակնածանք մեծերից *և այլն:*

Գործիական հոլովով դրված գերադաս անդամն արտահայտում է որևէ բան անելու, մասնավորման, բաղկացության, պարունակության, նյութի, միջոցի, տեղի և այլ հարաբերություններ: Օրինակ ՝ որմնանկարներով պատ, ծոպերով շալ, մեծ գլխով մարդ, տավարի մսով ճաշ, կառուցում նոր մեթոդներով, գետանցում նոր կամուրջով *և այլն:*

Երբ գերադաս անդամն ունենում է այլ որոշիչներ, այն փոխում է իր շարադասությունը և դրվում է գերադաս անդամից հետո, օրինակ՝ «Մյուսը վաղաժամ ծերացած մի երիտասարդ էր՝ աշխարհի հաճույքներից հոգնած դեմքով» (Շիրվանզադե, էջ 173):

Ծավալուն ստորադաս անդամը նախադասության մեջ կատարում է որոշչի պաշտոն և երբեմն հանդես է գալիս որպես կայուն բառակապակցություն. նման կիրառությունից էլ առաջացել են մի շարք բարդ ածականներ[6]*, ինչպես* ՝ մորուք ունեցող մարդ – մորուքավոր, բարձր հասակով – բարձրահասակ, երկար վզով – երկարավիզ, գեղեցիկ կազմվածքով – գեղակազմ *և այլն:*

[6] *Նույն տեղում, էջ 49:*

Գոյականական բառազուգորդումների շարքում ավելի հազվադեպ ենք հանդիպում ներգոյական հոլովով դրված ստորադաս անդամի. դա հատկապես լինում է այն ժամանակ, երբ գերադաս անդամն ունենում է բայական ծագում, իսկ բառակապակցությունն արտահայտում է տեղային հարաբերություն, օրինակ՝ հանդիպում ակադեմիայում՝ համալսարանում՝ ինստիտուտում՝ դպրոցում՝ աշխատանք գործարանում, ելույթ ՄԱԿ-ում, նիստ գիտական խորհրդում՝ Հայաստանի կառավարությունում *և այլն:*

Նման կիրառությունները ևս կարող են ունենալ վերնագրային արժեք, օրինակ՝ «Երկրաշարժ Թուրքիայում», «Սողք գյուղում» *և այլն:*

Ներգոյական հոլովով ստորադաս անդամ ունեցող բառազուգորդումները երբեմն արտահայտում են դրություն, հոգեկան վիճակ, օրինակ՝ Նա հեռացավ վիշտը սրտում*:*

Գոյականական բառազուգորդումները կարող են ունենալ նաև կապական կապակցությամբ ստորադաս անդամ՝: Ըստ որում ածականական ծագում ունեցող կապերը հեշտությամբ կապակցում են գոյականը գոյականի հետ: Այդպիսի կիրառությամբ հանդես են գալիս կից, նման, համաձայն, առընթեր, պես, հանգույն, համապատասխան, հակառակ *և այլ կապեր ու կապական բառեր, ինչպես՝* Աշոտի նման բարեկամ, համալսարանին կից խորհուրդ, ժամանակի թելադրանքին համապատասխան որոշում, կյանքին համընթաց շարժում *և այլն:*

Կապական ստորադաս անդամ ունեցող բառազուգորդումները հիմնականում արտահայտում են պարագայական-որոշչային հարաբերություններ: Օրինակ՝ շրջագայություն մինչև Մոսկվա, ընդունելություն մինչև սեպտեմբեր, հարցաքննություն առանց դատապաշտպանի *և այլն:*

Ժամանակակից հայերենում ավելի լայն տարածում ունեն որակական ածականով ստորադաս անդամ ունեցող գոյականական բառակապակցությունները, որոնք բնութագրում են առարկան, ինչպես՝ բարձր պարիսպ, ականակիտ աղբյուր, սառը ջուր, վճիտ աչքեր, կանաչ դաշտ, վառ հույսեր, գույնզգույն գորգեր *և այլն:*

Քանի որ հարաբերական ածականները ցույց են տալիս առարկայի միջնորդավորված հատկանիշ, այսինքն՝ հատկանիշ մեկ այլ առարկայի հարաբերությամբ, այդ պատճառով դրանցով արտահայտված բառազուգորդումները կարող են հոմանշային շարքեր կազմել առանձին հոլովաձևերի հետ, օրինակ՝ երևանյան արև//Երևանի արև, փայտյա դուռ//փայտից դուռ, գեղաչյա աղջիկ//գեղեցիկ աչքերով/*կամ՝* աչքեր ունեցող/աղջիկ *և այլն:*

Ածականների մի մասը պահանջում է հոգնակի թվով գերադաս անդամ, օրինակ՝ տարբեր կարծիքներ, զանազան ծաղիկներ, բազմաթիվ գրքեր, հին-հին ժամանակներ, սուր-սուր մագիլներ, սև-սև ունքեր *և այլն:*

Գերադաս անդամը կարող է դրվել և՛ որոշյալ, և՛ անորոշ առմամբ, օրինակ՝ նեղ փողոց(ը), հետաքրքիր գիրք(ը), լավ ընկեր(ը) *և այլն: Իսկ երբ ածականը գործածվում է* ամենա *նախամասնիկով կազմված գերադրական աստիճանով, գերադաս անդա-*

[7] *Տե՛ս Վ. Քոսյան. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:*

մը լինում է որոշյալ առումով, այսպես ՝ ամենահետաքրքիր գիրքը, ամենասիրելի որդին, ամենաազնիվ մարդը *և այլն:*

Ածական+գոյական բառազուգորդումները ևս կարող են հանդես գալ վերնագրային գործառույթով, օրինակ ՝ *«Ալպիական մանուշակ», «Փոքրիկ իշխանը», «Հին աստվածներ», «Սպիտակ ձին», «Քաջ Նազարը», «Սև ցելերի սերմնացանը» և այլն: Նման կառույցների գերադաս և ստորադաս անդամները կատարում են տարբեր պաշտոններ, օրինակ* ՝ *Անդրանիկն ունի սպիտակ ձի.* ձի *– ուղիղ խնդիր,* սպիտակ *– որոշիչ: Իսկ երբ բառազուգորդման կազմում կան տեղ, ժամանակ, հատկանիշ ցույց տվող բառերով կերտված գերադաս և ստորադաս անդամներ, դրանք կատարում են մեկ պաշտոն, օրինակ* ՝ Երկար մորուքով *մարդը իր վրա էր բևեռել շրջապատի ուշադրությունը:* Սև գույնի *կարապներն ավելի քիչ են հանդիպում:*

Մեկ անդամի պաշտոն են կատարում նաև այն բառազուգորդումները, որոնք առարկայի, տեղի անուն են, օրինակ ՝ Արշակ Երկրորդ, Աշոտ Երկաթ, Սևանա լիճ. Արշակ Երկրորդին *սպանեցին պարսիկները:*

Գոյականական բառազուգորդումների թվական ստորադաս անդամը դրվում է գերադասից առաջ: Օրինակ ՝ տասը գիրք, երրորդ դասարան, վեց-վեց տետր, հինգական ամսագիր և այլն: *Նման բառազուգորդումները կարող են ընդարձակվել, այսպես* ՝ գրեթե հարյուր զինվոր, համարյա հազար կիլոգրամ, մոտավորապես հիսուն աղջիկ, վերևից տասներորդ հարկը, առջևից երրորդ կարգը, ձախ կողմից չորրորդ աթոռը *և այլն:*

Այն բառազուգորդումները, որոնք ունեն չափի, կշռի, տարածության, ժամանակի միավոր ցույց տվող գոյականական գերադաս անդամ, նախադասության մեջ կատարում են մեկ անդամի պաշտոն, օրինակ ՝ *Նրանք անցան* երեսուն կիլոմետր *ճանապարհ, Մենյակն ունի* քսան քառակուսի մետր *մակերես, Նա* մեկ ժամում *ընթերցում է վաթսուն էջ և այլն:*

Տարբեր կառուցվածք ունեն նաև դերանուն ստորադաս անդամ ունեցող գոյականական բառազուգորդումները, օրինակ ՝ քո գիրքը, ձեր գրքերը, ակնարկ նրանց մասին, այդ որոշումը, սույն հրամանը, բոլորի կարծիքը, յուրաքանչյուր ուսանող, ինչոր մեկի տունը, ոչ մի տեղ *և այլն: Այդպիսի բառազուգորդումների գերադաս անդամը կատարում է նախադասության տարբեր անդամների պաշտոններ, իսկ ստորադաս անդամը կատարում է հատկացուցչի (եթե գոյականական արժեք ունի) կամ որոշչի (եթե ածականական արժեք ունի) պաշտոն, օրինակ* ՝ Ամեն տեսակ *երգ երգեցի, ամենից լավ տաղն է էլի (Ե. Չարենց, էջ 287):*

Գոյականական բառազուգորդման ստորադաս անդամ կարող են դառնալ նաև անկախ դերբայները, օրինակ ՝ խմելու ջուր, երգող թռչուն, ծաղկած այգի: *Անորոշ դերբայով արտահայտված ստորադաս անդամը կարող է կատարել հատկացուցչի (օրինակ* ՝ սովորելու ցանկություն, հարձակվելու հրաման*) կամ որոշչի (օրինակ* ՝ խմելու ջուր, ուտելու սունկ*) պաշտոն: Հարակատար դերբայով կազմված բառազուգորդման գերադաս անդամը կատարում է տարբեր պաշտոններ, իսկ հարակատար դերբայով արտահայտված ստորադաս անդամը* ՝ *որոշչի պաշտոն: Օրինակ* ՝ չորացած խոտ, չորացած խոտից, հոգնած մարդ, հոգնած մարդու *և այլն: Նման պաշտոն-*

ներ են կատարում նաև ենթակայական դերբայով արտահայտված բառազուգորդումները, օրինակ ՝ վազող տղա, վազող տղայով, մոլեգնող քամի, մոլեգնող քամու, ուժգնացող բուք, ուժգնացող բքից *և այլն: Որոշիչ-որոշյալ հարաբերություն են արտահայտում նաև ապառնի դերբայով կազմված գոյականական բառազուգորդումները, օրինակ* ՝ գալիք օր, գրելիք նամակ, կառուցվելիք կամուրջ, հասանելիք գումար *և այլն:*

Ժամանակակից հայերենում համեմատաբար քիչ ենք հանդիպում մակբայ+գոյական բառազուգորդումների, օրինակ ՝ արագ ընթացք, արտաքուստ հանգստություն, ի ծնե կոյր, դանդաղ քայլ *և այլն:*

Ածականական բառազուգորդումներ: *Ածականական գերադաս անդամ ունեցող բառազուգորդումները ժամանակակից հայերենում բավական տարածված են, բայց զիջում են գոյականական և բայական բառազուգորդումներին: Այդ բառազուգորդումներում գործառում են շարահյուսական կապակցման երկու եղանակ՝ առդրությունը և խնդրառությունը: Օրինակ* ՝ զուտ ոսկյա, բոլորին հաճելի, աշխատանքում բարեխիղճ, սիրուց խելագար *և այլն:*

Ածականական բառազուգորդումներում ստորադաս անդամը կարող է արտահայտվել ածականով, գոյականով, մակբայով, դերբայով, թվականով: Գոյական ստորադաս անդամը կարող է դրվել ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, այսպես ՝ աչքերը կապույտ, հագուստը գեղեցիկ, տունը երկհարկանի *(ուղղ.),* բոլորին հասանելի, մեզ հավատարիմ, իրադարձությանը ծանոթ, բոլորի համար սիրելի *(տրական),* աղջկանից գեղեցիկ, ղեկավարից դժգոհ, հայերենից ուժեղ *(բացառական),* բնավորությամբ հանգիստ, տեսքով գեղեցիկ, գինով լի *(գործիական),* ուսման մեջ ընդունակ, աշխատանքում ծույլ, կյանքում ժլատ, խոսելում զուսպ, իր պահանջների մեջ ժուժկալ *(ներգոյական) և այլն:*

Քանի որ մակբայը ցույց է տալիս հատկանշի հատկանիշ, հետևաբար այն գործածվում է բայարմատի և ածականի հետ, օրինակ ՝ չափազանց ընդունակ, քերականորեն ճիշտ, մորուք կաղ, դեռևս թարմ, առայժմ առողջ *և այլն:*

Երբեմն ածական գերադաս անդամը կարող է ընդունել մեկ այլ ստորադաս ածական անդամ: Օրինակ ՝ անհամեմատ բարի, անսահման չար, զարմանալի գեղեցիկ, լավ հայտնի, անասելի ծանր, աննկարագրելի ձանձրալի *և այլն:*

Ածականական բառազուգորդումները կարող են ստորադաս անդամ ընդունել նաև թվականներով, օրինակ ՝ յոթ ամսական, վեց տարեկան, երկու գլխանի, վեց մատանի, չորս թևանի, ութ ոտնանի, տասնչորս հարկանի *և այլն:*

Ածականական բառազուգորդումները ստորադաս անդամ են ընդունում նաև դերբայով, օրինակ ՝ սովորելու մեջ *(սովորելում)* ընդունակ, աշխատելու մեջ *(աշխատելում)* բարեխիղճ, խոսելու մեջ *(խոսելում)* զուսպ *և այլն: Այդ բառազուգորդումները նախադասության մեջ կատարում են մեկ անդամի պաշտոն: Դրանք կարող են հանդես գալ վերնագրային-անվանողական արժեքով, օրինակ՝ Բոլորի համար ընդունելի սահմանադրություն, Կյանքի պահանջներին համապատասխան փոփոխություններ, Մահվան պես դաժան հիվանդություն և այլն: Դրանք կարող են*

կատարել նաև ստորոգելիական վերադրի պաշտոն, օրինակ՝ «Զորապետ, ավելի լավ է *զեկուցես, թե ինչպես են գնում քո գործերը» (Հ. Խաչատրյան, էջ 331):*

Թվականական բառազուգորդումներ: *Ժամանակակից հայերենում հանդիպում ենք բոլոր տեսակի թվականներով գերադաս անդամ ունեցող բառազուգորդումների: Դրանցում թվականներն իրենց մակբայական լրացման հետ միասին գլխավորապես կիրառվում են որպես գոյականական անդամի լրացում՝ կատարելով նախադասության մեկ անդամի պաշտոն, օրինակ՝* մոտ հազար զինվոր, մոտավորապես տասը ուսանող, գրեթե հազար հինգ հարյուր մարդ *և այլն: Փոխանվանաբար գործածված թվական գերադաս անդամն ունենում է նաև բացառական հոլովով և հոգնակի թվով դրված լրացում, օրինակ՝* ուսանողներից ինը, նախարարներից երկուսը, ներկաներից մեկը, խոսողներից երկրորդը, ելույթ ունեցողներից չորրորդը *և այլն:*

Բայական բառազուգորդումներ: *Ժամանակակից հայերենում դրանք բավական տարածված են, որոնք կարող են ունենալ հարացուցային այն բոլոր ձևերը, ինչ գերադաս անդամն առանձին: Իսկ երբ գերադաս անդամը լինում է խոնարհված բայ, ապա բառազուգորդումը վերածվում է նախադասության: Գերադաս անդամին՝ բային, կարող են ստորադասվել տարբեր խոսքի մասերին պատկանող բառեր: Բայական բառազուգորդումներն առանձնահատուկ են նաև նրանով, որ կարող են ունենալ երկու և ավելի ստորադաս անդամներ, օրինակ՝* շարադրություն գրել գրիչով, զգուշությամբ բարձրացնել գետնին ընկած վիրավորին *և այլն: Բայական բառազուգորդման գերադաս անդամի հարաբերությունը ստորադաս անդամի հետ պայմանավորված է բայասեռով և բայիմաստով, օրինակ՝* գրել վեպ՝ նամակ՝ շարադրություն՝ պատմվածք՝ ակնարկ՝ բանաստեղծություն, վախենալ թշնամուց, մոտենալ անտառին՝ ամրոցին՝ բերդին՝ լճին *և այլն:*

Բայական բառազուգորդման ստորադաս անդամը կարող է արտահայտվել գոյականով, ածականով, դերբայով, մակբայով, կապական կապակցությամբ: Այն դրվում է գոյականի տարբեր հոլովներով և արտահայտում է խնդրային և պարագայական զանազան հարաբերություններ, այսպես՝ այցելել ընկերոջը, ձգտել ուսման, կյանքը զոհել հայրենիքին (*կամ՝* հայրենիքի համար), հանդիպել վաղեմի բարեկամին (բարեկամի հետ), ամռանը հանգստանալ (*տրական*), ծառ տնկել, սիրել ծնողին, ատել հակառակորդին, սխալ գործել (*հայցական*), հեռանալ հայրենիքից, լուրը թաքցնել մորից, սերել նախնիներից, սիրվել ամուսնուց (ամուսնու կողմից), գիշերվանից ձյուն գալ, ուրախությունից լաց լինել (*բացառական*), նկարել մատիտով՝ վրձինով, ջերմանալ արևի ճառագայթներով, ընտանիքով մեկնել, վերադառնալ հաղթանակով, անցնել փողոցով, գիշերով տուն հասնել, արագությամբ խնդիր լուծել, բուրել հաճելի բույրով, վերարկուներով նստել, ինչ-որ նպատակով մեկնել (*գործիական*), դասախոսել համալսարանում, մեկ տարում ավարտել ատենախոսությունը, այդ խնդիրը ապագայում լուծել (*ներգոյական*) *և այլն:*

Բայական բառազուգորդման ստորադաս անդամը դրվում է նաև կապական կապակցությամբ, որը կարող է դառնալ տարբեր տեսակի խնդիրներ, ներգործող, միջոցի, հանգման, սահմանափակման, ընդդիմության, բացառման: Օրինակներ՝ կա-

տարվել ուսանողների կողմից, հայտնել փոստատարի միջոցով, համակրանք ունենալ ուսուցիչների նկատմամբ, կռվել թշնամու դեմ, մեկնել զինվորների հետ, ծրագրեր մշակել կրթակարգի վերաբերյալ, բարեկամներից բացի ոչ ոքի չընդունել: *Օրինակներ ստորադաս անդամի պարագայական պաշտոնների վերաբերյալ* ՝ դասախոսության ժամանակ խոսել, նախքան քննությունները պարապել, առավոտից մինչև երեկո աշխատել, շարժվել դեպի գյուղ, թաքնվել քարի տակ, բարձրանալ մեկի հովանավորությամբ, դատել ըստ օրենքի, պայքարել հանուն խաղաղության, աշխատել հակառակ վատ եղանակին: *Այս կապական կապակցություններն արտահայտում են ժամանակի, տեղի, հիմունքի, նպատակի, զիջման պարագայական հարաբերություններ:*

Մակբայ+բայ կառույցի բառակապակցություններն արտահայտում են պարագայական հարաբերություններ ՝ *տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի: Օրինակներ* ՝ մշտապես հիշել, անընդհատ մտահոգվել, ամենուրեք պայքարել, հետզհետե հեռանալ, հաճախ նախազգուշացնել, անդադար աշխատել, միշտ ձգտել *և այլն:*

Արդի հայերենում հանդիպում ենք նաև ածական+բայ բառազուգորդումների, որոնցում հանդես է գալիս որակական ածականը և կատարում է պարագայի պաշտոն, օրինակ ՝ գեղեցիկ խոսել, լավ պատասխանել, զգույշ հեռանալ, մեղմ օրորել *և այլն:*

Բայական բառազուգորդումներում ստորադաս բաղադրիչի դերում հանդես են գալիս նաև անորոշ, համակատար և հարակատար դերբայները, օրինակ ՝ մեկնել հայրենիքը պաշտպանելու, գնալ աղջիկ ուզելու, թույլատրել գնալ, սկսել սովորել, մրսելուց դողալ, վախենալուց կակազել, կրկնելով անգիր անել, նվագելում հաղթել, գրելիս ուշադիր լինել, պառկած դիտել *և այլն:*

Նման կառույցներում հանդիպում ենք նաև կապական կապակցություններով բառազուգորդումների, օրինակ ՝ մութն ընկնելուն պես մեկնել, մեկնելուց առաջ զանգահարել, նստած ժամանակ խոսել, գրելու ժամանակ ուշադիր լինել, աշխատանքից գնալուց առաջ լույսը հանգցնել *և այլն: Նման կառույցներով մի երկու օրինակ բերենք նախադասության մեջ. «Հաճախակի կարկատանները* տարիների ընթացքում *աղավաղել էին նրա հագուստի իսկական ձևը»* «Առանց ժամանակ կորցնելու *ասպետն արշավի հրաման տվեց» (Հ. Խաչատրյան, էջ 297): «Լևոնը կարծում էր* ՝ *մեղավորը շեփորահարներից որևէ մեկն է, որ* պահանջաձի պես *չի փչում» (Հր. Մաթևոսյան, էջ 206):*

Մակբայական բառազուգորդումներ: *Ժամանակակից հայերենում նման բառազուգորդումների համեմատաբար քիչ ենք հանդիպում, սովորաբար ավելի հաճախ են գործածվում ձևի, մասամբ նաև ժամանակի ու տեղի մակբայներով կազմված բառազուգորդումները: Օրինակ* ՝ ավելի շուտ, ամենից դանդաղ, անչափ կամաց, չափազանց հեռու, շատ մոտ *և այլն:*

Մակբայական բառազուգորդումները կարող են կազմվել նաև կապական կառույցներով, ինչպես նաև գոյականի բացառական հոլովով, օրինակ ՝ քամու նման արագ, դանդաղ ինչպես կրիա//կրիայի նման դանդաղ, կրիայից դանդաղ *և այլն: Նման բառազուգորդումներում սահմանափակման իմաստ են արտահայտում* արտա-

քուստ, ներքուստ *մակբայները, օրինակ՝* արտաքուստ հանգիստ, ներքուստ մտահոգ՝ մտահոգված՝ անհանգիստ, անհանգստացած՝ վրդովված՝ ալեկոծված *և այլն: Մակբայական և կապական կապակցությամբ բառազուգորդումները նախադասության մեջ կիրառվում են որպես նախադասության մեկ անդամ, օրինակ՝ Այդ վթարը տեղի է ունեցել* տասնհինգ տարի առաջ: *Պետական* օրիներգի վերաբերյալ *արտահայտվել են իրարամերժ կարծիքներ:*

Վերևում արդեն նշվեց, որ շատ հազվադեպ հանդիպում ենք նաև դերանվանական բառազուգորդումների, օրինակ՝ գրեթե այդպիսի, համարյա այնքան, ընդամենը մի քանի *և այլն:*

Ամփոփելով կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

1. բառազուգորդումը կամ բառակապակցությունը երկու և ավելի բաղադրիչներից կազմված կապակցություն է, որն արտահայտում է բաղադրիչների շարահյուսական ստորադասական հարաբերություն:

2. Բառազուգորդումը անվանողական արժեք ունի և նախադասության կազմությանը մասնակցում է այնպես, ինչպես նախադասության անդամ դարձող բառը:

3. Բառազուգորդումները կազմվում են ստորադասական հարաբերությամբ, այսինքն՝ բաղադրիչները լինում են գերադաս և ստորադաս կամ լրացյալ և լրացում: Գերադաս անդամը կամ լրացյալը կարող է արտահայտվել նյութական տարբեր խոսքի մասերով, իսկ ստորադաս անդամը՝ նյութական խոսքի մասերով և կապերով: Ըստ խոսքիմասային պատկանելության տարբերակվում են գոյականական, ածականական, բայական, թվականական, մակբայական բառազուգորդումներ:

4. Ըստ կապակցելիության սերտության աստիճանի՝ բառազուգորդումները բաժանվում են ազատ և կայուն տեսակների: Իսկ ըստ բաղադրիչների քանակի լինում են երկանդամ կամ պարզ և բազմանդամ կամ ընդարձակ բառազուգորդումներ:

5. Նախադասության անդամներն առհասարակ միմյանց հետ ունենում են համազոր, ստորոգումային, որոշչային, խնդրային և պարագայական հարաբերություններ: Իսկ բառազուգորդման գերադաս և ստորադաս անդամների հարաբերությունները միմյանց հետ կարող են լինել որոշչային, խնդրային և պարագայական:

6. Ազատ բառազուգորդումների բաղադրիչները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ, իսկ կայուն կապակցությունները, ինչպես նաև մակբայական և կապական կառույցներով բառազուգորդումները դառնում են նախադասության մեկ անդամ:

7. Նախադասության անդամները միմյանց հետ կապակցվում են համաձայնությամբ, առդրությամբ և խնդրառությամբ, իսկ բառազուգորդման բաղադրիչները՝ առդրությամբ և խնդրառությամբ: Ըստ որում խնդրառությունը հատուկ է բայական և որոշ ածականական բառազուգորդումներին, իսկ առդրությունը՝ բառազուգորդման մյուս տեսակներին:

8. Ժամանակակից հայերենում գործածության բարձր հաճախականություն ունեն գոյականական և բայական բառազուգորդումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Վ. Դար կորստյան, Երևան, 1985:
2. Խաչատրյան Հ. Տիգրան Մեծ, Երևան, 1990:
3. Խեչումյան Վ. Մեզ մոտ, հարավում, Երևան, 1955:
4. Մաթևոսյան Հր. Ծառերը, Երևան, 1978:
5. Շիրվանզադե. Քառս, Երևան, 1976:
6. Չարենց Ե. Երկեր, Երևան, 1984:

СТРУКТУРНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ТИПЫ СЛОВОСОЧЕТАНИЙ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ГЕВОРК ТОСУНЯН

Р е з ю м е

Словосочетание–это связь двух или более слов, которые между собой имеют синтаксическое отношение. По выражению главного члена имеются именные, глагольные и наречные словосочетания, а по степени сочетаемости–устойчивые и неустойчивые или свободные. Члены неустойчивых словосочетаний в предложении выполняют разные функции, а фразеологические словосочетания–одну функцию. Словосочетания могут употребляться и в роли заглавия, например: *«Ալպիական մանուշակ»* (“Альпийская фиалка”), *«Սպիտակ ձի»* (“Белый конь”) и т. д. В современном армянском литературном языке более часто встречаются субстантивные и глагольные словосочетания. Словосочетания выражают определительные, предикативные и обстоятельственные отношения.